ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ

ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Սիրելի՛ շրջանավարտներ,

այսօր դուք ճանապարհվում եք դեպի մեծ կյանք, որտեղ ձեզ սպասում են հաղթանակների հազարավոր հնարավորություններ, վերելքներ ու վայրէջքներ, հիասթափություններ և նվաճումներ:

Սովորեք չհանձնվել փորձություններին, չտրվել մանր հաղթանակներից հետո եկող երանություններին: Մեծ կյանքի արագընթաց հոսքի մեջ փորձեք չկորցնել ձեր մանկական ազնվությունը:

Իրականություն դարձրեք ձեր ամենանվիրական երազները: Գործեք արդարամիտ, արարեք անմնացորդ նվիրումով:

Ձեր ընտրած ոլորտներում դուք կարող եք լինել լավագույնը, կարող եք չհաջողել, բայց պարտավոր եք որպես մարդ չդառնալ միջակություն:

Ձեր բոլոր գործերը պիտի ծառայեն ձեր Հայրենիքին ու տանը, իսկ Հայրենիքի համար գծված գործերը չեն կարող անազնիվ ճանապարհով գնալ:

Բարին ընդ ձեզ, սիրելի՛ շրջանավարտներ:

Թող ձեր մանկական միամտությունը չլքի ձեզ ողջ կյանքի ընթացքում:

Շարունակեք գնալ ձեր երազանքների ետևից:

Հարգանքներով՝ Սուրեն Կոստանդյան